

Հաշվետվություն

1. Անունը, Ազգանունը

Արայիկ Հարությունյան

2. Ջբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ 2019 թվականի հունվարի 14-ից 20-ը

4. Հրավիրող կողմը

Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների միության նախագահ Ջոն Էմանուել Շիրաջյան

5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր Կալիֆոռնիա նահանգի Գլենդել քաղաքում կայանալիք միության 35-րդ համագումարին մասնակցությանը, որի ընթացքում աշխարհահռչակ գիտնական Յուրի Հովհաննիսյանին հանձնվել է Վիկտոր Համբարձումյանի անվան 2018 թվականի մրցանակ:

6. Քննարկված թեմաները և ձեռք բերված պայմանավորվածությունները

Ամերիկայի Միացյալ Նահանգներում այցելել եմ Լոս Անջելեսի դպրոցներ՝ նախ ԱՐ. ԴԻ. Վայթ տարրական դպրոց, որտեղ կրթությունն իրականացվում է երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն: Հանդիպել եմ դպրոցի պատասխանատուների և տնօրենի հետ, քննարկել մի շարք հարցեր, այդ թվում՝ դասագրքերի և ուսուցիչների վերապատրաստումների վերաբերյալ: Այցելել եմ նաև Շարլոտ և Էլիզ Մերդինյան Հայ-ավետարանական վարժարան, որտեղ տեղի ունեցած միջոցառման ընթացքում հանդես եմ եկել ելույթով: Իմ խոսքում նշել եմ, որ ՀՀ նոր կառավարության համար սփյուռքի հետ համագործակցությունն էլ ավելի կարևոր է Հայաստանում վերջին շրջանում տեղի ունեցող տնտեսական զարգացումների համատեքստում, երբ առաջնահերթ է դարձել ԱՄՆ գիտակրթական և տեխնոլոգիական ներուժի ներգրավումը մեր երկրում տեղի ունեցող փոփոխություններին՝ ընդգծելով սփյուռքի

հայկական համայնքների մասնակցությունը Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությանը: Այնուհետև այցելել եմ ՀԲԸՄ-ի Մանուկյան-Դեմիրճյան վարժարան, ծանոթացել ուսումնական ծրագրերին, ինչպես նաև շրջել դպրոցի լաբորատորիաներում: Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռքբերվել ՀԲԸՄ-ի ավագ դպրոցների աշակերտների ուսումնական պրակտիկան Հայաստանում, այդ թվում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում կազմակերպելու վերաբերյալ: Բացի այդ, ՀԲԸՄ-ի խորհրդի անդամները բարձրաձայնել են սփյուռքի մասնագետների ներուժը մեր երկրում տեղի ունեցող ծրագրերին ներգրավելու հարցը: Այցելել եմ Լոս Անջելեսի կալիֆոռնյան համալսարան /UCLA/, որտեղ հանդիպել եմ Մերձավոր Արևելքի լեզուների և մշակույթների ֆակուլտետի Կոթսենի անվան հնագիտության ինստիտուտի տնօրեն Վիլեկե Վենդրիխի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի հետ համագործակցության զարգացման հեռանկարները և ձեռքբերվել մի շարք պայմանավորվածություններ:

Հանդիպել եմ նաև համալսարանի Մերձավոր Արևելքի լեզուների և մշակույթների ֆակուլտետի Նարեկացու անվան հայագիտության ամբիոնի ղեկավար Փիթր Քաուլիի հետ, որի ընթացքում քննարկվել են առաջիկա համատեղ անելիքները: Հրավեր եմ ստացել մասնակցելու շաբաթ օրը կայանալիք հայկական սփյուռքի թեմայով խորհրդաժողովին, որտեղ հանդես եմ եկել ելույթով: Այցելել եմ նաև Հարավային Կալիֆոռնիայի համալսարան /USC/, որտեղ շրջել եմ համակարգչային գիտության լաբորատորիայում, այնուհետև ծանոթացել հայագիտության կենտրոնի աշխատանքներին: Զրույց եմ ունեցել կենտրոնի ղեկավար Սալբի Ղազարյանի հետ, որի ընթացքում կոնկրետ պայմանավորվածություն է ձեռքբերվել հայկական սփյուռքի հնարավորությունները, կադրերը, ինչպես նաև կենտրոնի հզորություններն ու ներուժը կրթության և գիտության զարգացման ուղղությամբ օգտագործելու վերաբերյալ:

7. Գործուղվողը

ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյան

8. Սպորազրույթունը, ամսաթիվը

29.01.2019